ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»[1]

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանը հելլենիստական աշխարհի պետությունների ամենավառ օրինակներից մեկն է։ Հայտնի է, որ եղել են երկու տիպի հելլենիստական պետություններ՝ հունական և տեղական քաղաքական իշխանությամբ։ Հայաստանը պատկանում էր երկրորդ տիպին, ուստի Հայաստանի հելլենիստական շրջանի պատմության, տնտեսության և մշակույթի բազմակողմանի ուսումնասիրությունը կարևոր է ընդհանրապես երկրորդ տիպին պատկանող երկրների մասին պատկերացում կազմելու համար։

Այս առումով պեղումներից և օտար աղբյուրներից բացի, իրենց ուրույն տեղն ունեն վաղ միջնադարյան հայ մատենագիրների գործերը, առաջին հերթին՝ Խորենացու «Հայոց պատմությունը»։ Վերջինս շատ ուշագրավ տեղեկություններ է պարունակում անտիկ շրջանի Հայաստանի և հարևան երկրների պատմության ու մշակույթի, այդ թվում նաև քաղաքների և քաղաքաշինության մասին։

Հայաստանի թագավորները, լավ հասկանալով քաղաքների դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, առևտրի, արհեստագործության ու մշակույթի զարգացման գործում, հետևելով հելլենիստական երկրների օրինակին՝ առևտրական ճանապարհների երկայնքով, մեկը մյուսի հետևից, հիմնադրում էին քաղաքներ, որոնք ստանում էին դինաստիական անուններ։

Ամենակարևոր խնդիրը քաղաքի տեղի ճիշտ ընտրությունն էր։ Մովսես Խորենացին մեծ ուշադրություն է դարձնում այդ հարցին[2]։ Դա երևում է Վանի (I, 16), Երվանդաշատի (II, 39), Արտաշատի (II, 49) նկարագրության մեջ։ Նա այդ կապակցությամբ նշում է հետևյալ հանգամանքները։ Տվյալ տարածքը պետք է առևտրական ճանապարհներին մոտ լիներ, ունենար պաշտպանության համար հարմար դիրք, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար արդավանդ հողեր, ջրառատ լիներ՝ քաղաքի կոմունալ տնտեսության համար, ձկնառատ գետեր լիներին և այլն։ Այս առումով շատ ուշագրավ է Կարին քաղաքի (III, 59) կառուցման մասին վկայությունը, որտեղ ավելի ամբողջական և առավել ցայտուն են դրսևորվում քաղաքի տեղի ընտրության համար կարևոր բոլոր հատկանիշները։

Քաղաքաշինության կարևորագույն օղակներից մեկը պաշտպանական կառույցներն են, որոնք արտահայտում են ավյալ շրջանի ճարտարապետության ռազմարվեստի նվաճումները և պետության տնտեսական ու քաղաքական վիճակը։ Հզոր պաշտպանական համակարգեր ունեցող քաղաքները, լավ կազմակերպված զորքի հետ միասին, երկրի անկախության գրավականն էին։ Ուստի, պաշտպանական կառույցները պետք է համապատասխանեին զար-

---

1 Զեկուցում՝ կարդացված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակին նվիրված գիտաժողովում, Երևան, 1991։

2 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Յարութիւնեանի. Երևան, 1991։

գայող պոլիորկետիկայի (քաղաքներ պաշարելու արվեստի) պահանջներին և մշտապես լինեին պատրաստի վիճակում։

Մովսես Խորենացին քաղաքների և դրանց կառուցման վերաբերյալ խոսելիս մշտապես շեշտում է տեղանքի ընձեռած հնարավորությունների, պարիսպների կառուցման կամ գոյության, քաղաքի և միջնաբերդի ամրությունների, մուտքերի պաշտպանության կազմակերպման, խորամանկորեն կառուցված թակարդների մասին (I, 16, II, 36, 39, III, 28, 59)։ Դա հատկապես լավ է արտահայտված Վանի, Երվանդաշատի, Վաղարշապատի և Կարինի կառուցմանը վերաբերող հատվածներում (I, 16, II, 39)։ Վանի մասին նա գրում է. «...յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագունիւք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք»։ «Զորոյ պարսպեալ ղզագաթնն՝ դժուարամուտս ոմանս և դժոխեալնելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկս իմն ահագինս» (I, 16)։ Երվանդաշատի մասին ասում է. «Պարսպէ զբլուրն ե ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն։ Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանդնէր ի միջոցի պարըսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելևմտից ճանապարհ տուընչենային, իսկ միւսն գիշերային և մարդադաւաց» (II, 39)։ Կարինի մասին՝ «...անդ ետեղագրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ խոր փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց զհիմունս պատուարին. և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց...», «և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս իբրև զնաւացառուկս,...», «իսկ ընդդէմ արևելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս» (III, 59)։ Մծբինի մասին՝ «Զի ի շարժմանէ խախտեալ՝ քակեաց և վերստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ» (II, 36) և այլն։

Հույները քաղաք էին համարում միայն պարսպապատ քաղաքները։ Նման մոտեցում ունի նաև Մովսես Խորենացին, որն արտահայտվում է Վաղարշապատին վերաբերող հատվածում (II, 65)։

Հելլենիստական քաղաքները կառուցվում էին միասնական, երկրի կողմերի ուղղությամբ կողմնորոշված կանոնավոր հատակագծով։ Մովսես Խորենացու մոտ պահպանվել են այդ սկզբունքը դրսևորող փաստեր Վանի (I, 16) և Կարինի (III, 59) կառուցման նկարագրության մեջ. «Եւ գեղեցկագունիւք և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով» (I, 16)։ «Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բղխեալ՝ անդ ետեղագրեաց զքաղաքն» (III, 59)։ Ուշադրավ է, որ Պլուտարքոսը նույն ձևով հաղորդում է Արտաշատի մասին. «Նկատելով, բացի այդ, այս երկրում չօգտագործված ու անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը։ Հանիբալը տարավ Արտաշեսին ցույց տվեց հատակագիծը և համոզեց այդ տեղում քաղաք հիմնել։ Թագավորն ուրախությամբ համաձայնվեց և խնդրեց, որ նա իր վրա վերցնի այդ գործի ղեկավարությունը։ Այսպիսով կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց Թագավորի անունով և հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք»[3]։ Այսպիսով, քաղաքաշինության սկզբունքների մասին խոսելիս Պատմահայրը նշում է այն սկզբունքները, որոնք ընդունված էին անտիկ տրադիցիայում։

---

[3] Плутарх. Сравнительные жизнеописания, в трех томах. Т. II. Лукулл. XXXI, 5 (пер. С. С. Аверинцева). М., 1963.

Արտաշատին նվիրված հատվածում Մովսես Խորենացին նշում է նրա տեղը, շեշտում, որ թագավորն այն կոչում է իր անունով, բնակեցնում և վերածում քաղաքական ու կրոնական կենտրոնի. մեծ ուշադրություն է դարձնում իր քաղաքը շքեղ կառուցելու վրա։ «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. Վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհին։ Եվ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զհրէութիւն գերութիւն, որ փոխեալ էին անդր յԱրմաւիրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր սարեալ էր յԱրմաւիրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէ յօրինէ բիւրս զքաղաքս արքայանիստ»[4]։

Արտաշատի՝ 1970 թ. սկսված և առ այսօր շարունակվող պեղումները հաստատեցին հայ և օտար հեղինակների վկայությունները, դրա՝ ընդհանուր պլանով կառուցված գեղեցիկ քաղաք լինելը։ Արտաշատը հիմնադրվել է Արտաշես I-ի կողմից մ. թ. ա. 189/8 թթ.[5], Արարատյան բարեբեր դաշտում, գեղատեսիլ Արարատի դիմաց, Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում սանեղծված թերակղզու 12 մեծ ու փոքր բլուրների վրա, միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում։ Այսինքն տեղի ընտրությունը շատ հաջող էր կատարված թե՛ ստրատեգիական և թե՛ տնտեսական առումով, և միանգամայն համապատասխանում էր բոլոր այն պահանջներին, որոնք, ըստ անտիկ հեղինակների, անհրաժեշտ էին քաղաքի կառուցման համար[6]։ Արարատյան դաշտը հնարավորություն էր տալիս զբաղվելու հողագործությամբ և ստեղծելու քաղաքամերձ գյուղատնտեսական ընդարձակ շրջան։ Արաքսի և Մեծամորի ջրերը թույլ էին տալիս մշակելի հողերը ոռոգել։ Գետերը հարուստ էին ձկներով, իսկ նրանց թավուտներն ու եղեգնուտները՝ որսի կեն-

---

[4] Մովսես Խորենացի, II, 49։

[5] Արտաշատի հիմնադրման ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան. Հ. Մանանդյանն այն համարում է մ. թ. ա. 166 թ. (Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության.— Երկեր, հ. I, Երևան, 1977, էջ 124), Ս. Երեմյանը՝ մ. թ. ա. 176 թ. (Развитие городов и городской жизни в древней Армении.— Вестник древней истории (ВДИ), 1953, № 3, с. 19). Բ. Առաքելյանը՝ մ. թ. ա. 180–170 թթ. (Арташат I. Основные результаты раскопок 1970–1977 гг. Ереван, 1982, стр. 9). Գ. Սարգսյանը՝ մ. թ. ա. 185 թ. (Գ. Խ. Սարգսյան. Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք.— Հայ ժողովրդի պատմություն (ՀԺՊ), Երևան, 1971, էջ 539–541), Ի. Շիֆմանը ենթադրում է, որ Ստրաբոնի (XI, XIV, 6) և Պլուտարքոսի (Luc. XXXII) պատմածը [illegible] և Արտաշատի հիմնադրումը կապելով Հաննիբալի անվան հետ, նա համարում է, որ Արտաշատը հիմնադրվել է մ. թ. ա. 189/8 թթ. (Ганнибал в Армении.— «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1980, № 4, էջ 257–261, տե՛ս նաև Diod., XXXI, 17a; Der Kleine Pauly, Bd. I. Stuttgard, 1964, s. 6[illegible]; Lexicon der Antike, Leipzig, 1978, s. 5[illegible]). Մենք ընդունելի ենք համարում Ի. Շիֆմանի կարծիքը, գտնելով, որ Հաննիբալը իսկապես կարող էր լինել Հայաստանում, օգնել քաղաքի տեղի ընտրության հարցում, ընդհանուր գծերով ներկայացնել հատակագիծը և նույնիսկ սկզբնական շրջանում մասնակցել աշխատանքներին։ Մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ Արտաշատի ստրատեգիական միջնաբերդի պարիսպները և ուրիշ շինությունները այդ ժամանակ պետք է գոնե բավականին լավ պատրաստված լինեին։ Ինչ վերաբերում է Հաննիբալի Հայաստանից շուտ հեռանալուն, ապա, հավանաբար պատճառներից մեկն այն է, որ մ. թ. ա. 188 թ. Ապամեայի հաշտության պայմանագրի կետերից մեկը Հաննիբալին հռոմեացիներին հանձնելն էր, իսկ Մագնեսիայի ճակատամարտից հետո Արտաշեսը բարեկամական հարաբերությունների մեջ էր հռոմեացիների հետ (Strabo, XI, 14, 15).

[6] Архитектура античного мира. М., 1940, с. 33.

դանիներով։ Բլուրները հիմնականում սև մարմարից և օնիքսից էին, իսկ Արտաշատից ոչ հեռու գտնվում էին կրաքարի, տրավերտինի, բազալտի և այլ քարերի հանքավայրեր, որոնք հումք էին մատակարարում ոչ միայն քաղաքի շինարարության, այլև կենցաղային, արտադրական և դեղարվեստական իրեր ու զարդեր պատրաստելու համար։ Քաղաքի ծայրամասում գտնվող բարձրորակ կավի մեծ պաշարները նախ և առաջ շինանյութ էին քաղաքի հսկայական ու երկարաձիգ (15000 մ ավելի) պարիսպների ու բնակելի տների համար, այնուհետև կավի առկայությունը խեցեգործությամբ զբաղվելու լայն հնարավորություն էր ընձեռում։ Արարատի մոտակայքում գտնվող կվարցիտի հանքավայրերը հումք էին հանդիսանում ապակեգործության և ջնարակած խեցեղենի զարգացման համար։ Գետի, ջրհորների և լեռներից բխող քաղցրահամ առատ ջրերը բավարար էին քաղաքի բարեկարգման և հիգիենիկ պահանջների համար։ Կավե լայն խողովակներով (45×55 սմ) քաղաքը խմելու ջուր է ստացել (Վեդու կողմից), որը կավե նեղ (10 սմ) խողովակներով բաժանվել է վերին քաղաքի թաղամասերին։ Արտաշատում հայտնաբերվել են մի քանի բաղնիքներ, որոնցից երկուսը (VIII բլրի վրա) պատկանում են II—III դդ.։ Քաղաքի տարբեր մասերում բացվել են դրենաժային ցանցեր, պարիսպների մեջ թողնված են անձրևաջրերի հեռացման անցքեր և այլն։

Արտաշատի պեղումներով բացված թաղամասերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանք ոչ թե անսիստեմ, տարերայնորեն կառուցված, մեկը մյուսին հարող բնակարաններից են բաղկացած, այլ պլանավորված ձևով ստեղծված, երբեմն կարճ ժամկետում կառուցված և հետագայում, որոշ դեպքերում մասնակի փոփոխությունների ենթարկված համալիրներ են։ Փոփոխությունները չեն խախտել նրանց սկզբնական ընդհանուր հատակագիծը և ներքին հիմնական կառուցվածքը։ Ըստ էության դրանք հանդիսանում են մի հսկայական շինություն, որի հիմնական պատերն անպայմանորեն կառուցված են միանդամից։

Պեղված թաղամասերի հատակագծերը հաստատում են նրանց կանոնավոր բնույթը։ Փողոցներով բաժանված բնակելի համալիրների մեկ գծի վրա լինելը խոսում է այն մասին, որ քաղաքի թաղամասերը, անկասկած, կառուցվել են նախապես մշակված միասնական հատակագծով, որպես պաշտպանական համակարգի հետ սերտորեն կապված մեկ միասնական համալիր։ Թե ինչ աստիճանի սերտ է եղել այդ կապը, երևում է համալիրների մեջ թողած անցումներից, կամ պարիսպների երկայնքով սարքված փողոցներից։ Ամենքն, պաշտպանական կառույցները և բնակելի թաղամասերը կառուցվել են, անկասկած, որպես օրգանապես կապված ամբողջական կոմպլեքսներ։ Մովսես Խորենացու վերոհիշյալ վկայություններից ելնելով կասելի է ենթադրել, որ միասնական հատակագծով կառուցելու սկզբունքն ընդհանուր է եղել Հայաստանի հելլենիստական քաղաքների համար։

Արևելքի ազդեցությամբ ստեղծված հելլենիստական քաղաքի բնորոշ գծերից մեկը եղել է այն, որ միապետի կամ կառավարչի նստավայրը, վարչաքաղաքական կենտրոնի հետ միասին, անջատվում էր քաղաքի մյուս թաղամասերից, բնակչության հավաքատեղիներից[7] (Անտիոք, Ալեքսանդրիա, Դուրա-Եվրոպոս. Պերգամոն), Պաշտամունքային գլխավոր համալիրները, նույնպես կառուցվում էին առանձնացած տեղերում։ Այս առումով ուշադրավ է Մովսես Խորենացու վկայությունը Երվանդի կողմից մայրաքաղաքը Արմավիրից Երվանդաշատ, իսկ կուռքերին Բագարան տեղափոխելու մասին։ Նա հստակորեն նշում է, որ ոտ արվել է բնակչության հավաքատեղիներից խուսափելու համար. «Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կռոցն, զոր ոչ օգուտ իւր համարեալ

---

[7] Т. Н. Козина. Некоторые вопросы градостроительства эллинизма.—Вопросы всеобщей истории архитектуры. Сб. № 1, М., 1961, с. 72.

յիրն փոխել ի քաղաքն, զի մի ի դալ և ի գնալ անդ աշխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն, այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ դիմախոսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան...» (II, 40):

Քաղաքաշինության այս սկզբունքներն իրենց արտահայտությունն են գտել նաև Արտաշատում: Ըստ Մովսես Խորենացու, ինչպես վերը նշեցինք, Արտաշես I-ը Արտաշատը կառուցելուց հետո «...կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն» (II, 49): Պեղումները ցույց տվեցին, որ II բլրի վրա, որն ամենաբարձրն է (70 մ) և ունի ամենամեծ օգտագործելի մակերես, քաղաքի միջնաբերդն է, որտեղ տեղավորված են պալատական վարչական համալիրները, ավագանու բնակարանները, զորանոցները: Այն, ճիշտ է, գտնվում է պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ, բայց իր երկու հզոր պարիսպներով լավ պաշտպանված անառիկ դիրք ունի, և հանդիսանում է ոչ միայն հուսալի հենարան արտաքին թշնամու դեմ, այլև տիրող դասի իշխանության համար, ընդդեմ քաղաքի շահագործվող բնակչության: VI բլրի վրա (բարձր. 50 մ) տեղադրված են եղել պաշտամունքային գլխավոր համալիրները՝ Անահիտին և նախնիների պաշտամունքին նվիրված տաճարը: Այսինքն, հելլենիստական քաղաքների օրինակով[8], նաև շեշտվում է պալատական վարչական հատվածի գլխավորող դերը պաշտամունքայինի նկատմամբ: Ապոլոնի տաճարը կառուցվել է քաղաքի հարավային կողմում, պարսպից դուրս, Արաքսի աջ ափին գտնվող բլրի վրա, Արտաշատ—Տիգրանակերտ ճանապարհի եզրին[9]:

Արևելքում, կլիմայական պայմաններից ելնելով, անհրաժեշտություն է եղել քաղաքին մոտ անտառների, այգիների, պարտեզների, լճերի, որսատեղերի և զբոսանքի վայրերի ստեղծումը: Այն ամբողջովին որդեգրվել է հելլենիստական միապետների ու կառավարիչների կողմից[10]: Լավագույն օրինակներից է Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, որի արվարձաններից մեկում՝ Դաֆնայում էր գտնվում նրանց մերձքաղաքային նստավայրը, հրաշալի այգիներով (մոտ 15 կմ շրջագծով): Այդ սովորությունը եղել է նաև Հայաստանում: Մովսես Խորենացին վկայում է, որ Երվանդը մայրաքաղաք Երվանդաշատը կառուցելուց հետո «տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, և եղանց և եղջերուաց ազգ, և ցիռս և վարազս. որք ի բազմութենէ աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոյ: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց» (II, 41): Պեղումներով պարզվել է, որ այնտեղ կառուցված է եղել նաև պալատական շենք:

---

8 Т. Н. Козина. Указ. соч, с. 22.

9 Տաճարը տեղադրվել է նաև Զվարթնոցում՝ Արտաշատ—Վաղարշապատ ճանապարհին Դվինում (Ս. Երեմյան): Մենք մեր աշխատանքներում մանրամասն անդրադարձել ենք այդ հարցին, ցույց տալով, որ Ապոլոն—Միհր—Տիրի տաճարը պետք է լիներ Արտաշատի մոտ, նրա արվարձանում, ոչ թե 10—20 կմ հեռավորության վրա (Ժ. Խաչատրյան. Իրանա-հելլենիստական դիցարանական տաճարների հարցի շուրջ.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 2, էջ 58—62: Նույնի՝ Հելլենիստական քաղաքաշինության որոշ առանձնահատկությունների Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին,—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 2, էջ 47—50), ինչպես Մ. Խորենացին է նշում. «Բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն» (II, 49): Նման մի այլ դեպքի կապակցությամբ նա հստակ շեշտում է Արամազդի արձանի քաղաքից հեռու լինելու հանգամանքը. «Եւ խոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն, գետոյն հզօր ընդ մէջ անցանելով» (II, 86):

10 Նույն տեղում, էջ 53: Т. Н. Козина. Указ. соч., с. 12.

Տիգրան II-ը նման մեծ անտառ տնկել է իր նոր կառուցած մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի մոտ։ Ինչպես երևում է գրավոր աղբյուրներից, Տիգրանակերտում իրենց արտահայտությունն են գտել հելլենիստական քաղաքաշինության լավագույն տոհմիդիաները։ Տիգրանակերտը պետք է լիներ ավելի գեղեցիկ ու շքեղ, քան Անտիոքը, քանի որ, ինչպես հելլենիստական քաղաքաշինության ոհտակ Վ. Չերիկովերն[11] է ասում, Տիգրանը միանգամից ուզում էր ունենալ այն ամենը, ինչ մյուս հելլենիստական քաղաքներում ստեղծվել էր երկար ժամանակում։ Տիգրանակերտն, ըստ անտիկ հեղինակների, շքեղորեն կառուցապատված հարուստ քաղաք էր, բարձր պարիսպներով (25 մ), անմատչելի միջնաբերդով[12], պարիսպներից դուրս, քաղաքի արվարձանում տնկված անտառով, որը նաև որսատեղի էր իր ձկնավազաններով ու լճակներով։ Այնտեղ կառուցված էր նաև պալատական շենք, որի առկայությունը սխալ է մեկնաբանվել շատ գիտնականների կողմից, որոնք ենթադրել են, թե Տիգրանակերտը բաղկացած է եղել բուն քաղաքից և անտառում ոտնվող պալատական շինություններից, ինչը համարվել է անսովոր երևույթ Հայաստանի համար[13]։ Սակայն դա նույնն է, ինչ որ Երվանդի անկած «Մենոոս անտառը», միայն շատ ավելի շքեղ ու հարուստ, և կարող է համեմատվել Դաֆնայի հետ։ Տիգրանակերտը, Հայաստանի մյուս մայրաքաղաքների նման, ունեցել է անառիկ ամրոց, որտեղ մ. թ. ա. 69 թ., երբ Լուկուլլոսը պաշարեց Տիգրանակերտը, գտնվում էին Տիգրանի կանանոցն ու դանձերի մի մասը։ Հայտնի է, որ Տիգրանը վեց հազարանոց հսկայական հեծելազունդ ուղարկեց, որը ճեղքելով պաշարման օղակը, քաղաքից դուրս բերեց կանանոցն ու դանձերը[14]։ Մ. թ. 60—61 թթ., Տիգրան VI-ի օրոք, Տիգրանակերտը դարձավ Հայաստանի մայրաքաղաքը։ Տիգրան II-ի կանանոցն ու դանձերը, ինչպես նաև Տիգրան VI-ը, իհարկե կապրեին միայն Միջնաբերդի պալատական համալիրում[15]։

Արտաշատի համար, ըստ երևույթին, սկզբնական շրջանում որսատեղիներ են եղել Մասիսի լանջերը, որի մասին ակնարկում են Մովսես Խորենացին (II, 61) և Ագաթանգեղոսը (§ 211)։ Հետագայում, Խոսրով II Կոտակը այդ նպատակով անտառ է տնկում Ագատ գետի մոտ, որը մինչև այսօր էլ կոչվում է նրա անունով (Խոսրովակերտ), իսկ Դվին կոչված բլրի վրա կառուցում է արևից պատսպարված մի ապարանք. «Իսկ սորա դքտչութենէ և դբարի յիշատակաց անփոյթ արարեալ՝ զբօսանաց և հաւրսութեանց և այլոց որսոց պարապեալ. նորին աղագաւ և անտառ առ Ագատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակիս։ «Նա և դարձունիսն փոխէ վերու անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեաւ...»[16]։

Մովսես Խորենացու Դվինին վերաբերող այս վկայությունը մենք մանրամասն անդրադարձել ենք մեր վերոհիշյալ աշխատություններից մեկում[17]։

Այս տեղեկությունը Խորենացին քաղել է Բուզանդից, բայց, ինչպես Խորենացու Հայոց պատմության ուսումնասիրողներն են նկատել, նա փորձում է իմաստավորել երևույթները և հաճախ յուրովի է ներկայացնում Փ. Բու-

---

[11] Tscherikower. Die hellenistischen stadtegründungen von Alexander dem Grossen bis auf die Römerzeit. „Philologus", Suplementband XIX. Heft I, Lepzig, 1927. S. 199.

[12] App., Mithr., 84; Plut., Lucull., XXVI; Tacit., Annales, XV. 4, Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 171—172։ Г. Х. Саркисян. Тигранакерт. М., 1960. с. 49—75.

[13] Այդ մասին տե՛ս Ժ. Խաչատրյան. նշվ. աշխ., էջ 53—54, գրականությունը նույն տեղում։

[14] App., Mithr., 85.

[15] Tacit, Annal., XV. 4. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 741, 747—748։

[16] Մովսես Խորենացի, III, 8։

[17] Տե՛ս Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների մասին, էջ 51—56։

գանդի հաղորդումը։ Կան դեպքեր, որ Բուզանդի պատմածը ճիշտ է, սակայն Խորենացին այն փոխարինել է սխալ պատմությամբ[18], ինչպես այս դեպքում։ Բուզանդը (III, 8) ասում է. Խոսրով Կոտակը անտառ տնկեց Գառնիից «մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում... մինչև Տիկնունի ապարանքը։ Նա այս մերին կոչեց Տաճար մայրի։ Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեղնուտի եղերքով,... սրա անունն էլ դրին Խոսրովակերտ։ Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ»։ Անտառներում «...զանազան կենդանիներ բաց թողեցին,... որպեսզի նրա թաղավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղը դառնան» ինչպես Սրվանդի տնկած Ծննդոց անտառը Սրվանդաշատի մոտ, Տիգրանակերտի անտառը պալատական շենքով և այլն։ Խորենացին, ինչպես վերը տեսանք, թեև նշում է, որ Խոսրովն անփույթ էր բաղության և բարի հիշատակների հարցում, նա անտառ տնկեց որպեսզի որսորդությամբ զբաղվի, սակայն բացատրելու համար ապարանք կառուցելու փաստը, ավելացնում է. «...նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլրի վրա», իբր «...այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեղակին և անմաքուր ջերմ օդը դարշելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին չդիմանալով կամավոր հանձն առան այս տեղափոխությունը» (III, 8)։

Խորենացու այս հաղորդումն էլ պատճառ է դարձել, որ որոշ գիտնականներ ենթադրեն, թե Խոսրով Կոտակը մայրաքաղաքը տեղափոխել է Դվին[19], բանի որ Մեծամորը հուներ փոխել էր, այդ պատճառով Արտաշատի շրջակայքում առաջացել էին ճահիճներ։ Նախ նշենք, որ Մովսես Խորենացին Մեծամորի հուներ փոխելու մասին չի վկայում։ Դա տվյալ կարծիքի հեղինակների ենթադրությունն է։ Մեծամորը համենայն դեպս մինչև VI դարի կեսերը հուներ չի փոխել, այլ հոսել է Արաքսին զուգահեռ[20]։ «Աշխարհացույցի» բարտեզում ցույց է տրված, որ Մեծամորը հոսում է Արաքսին զուգահեռ և Արտաշատի մոտ միանում է նրան։ Աս. Շահնազարյանը Դվինին նվիրված իր մենագրության մեջ հատուկ քննության առարկա է դարձրել բոլոր այն աղբյուրները, որոնք հիշատակել են Դվինը՝ մինչև մարզպանական Հայաստանի մայրաքաղաք դառնալը։ Հերքելով այդ աղբյուրների հավաստի լինելը, նա իրավացիորեն շեշտում է, որ Ագաթանգեղոսի, Կորյունի, Ղազար Փարպեցու և Եղիշեի մոտ Դվինն ընդհանրապես չի հիշատակվում[21]։ Այնուհետև, Խոս-

---

18 Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, թարգմ. ներածություն և ծանոթագրություններ Ստ. Մալխասյանցի. Երևան, 1947, էջ 72, 74։

19 Կ. Դ. Զաֆարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. հ. 2, Երևան, 1982, էջ 134—139; Г. А. Тирацян. О некоторых особенностях основания города Двин.— Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке, Тезисы докладов, Ереван, 1988, с. 85—86. Ա. Քալանթարյան. Դարձյալ Դվինի հիմնադրման մասին.—«Երևան հասարակական գիտություններ», 1988, № 1, էջ 63—70։ Հեղինակի Դվինի վաղ միջնադարյան նյութերին նվիրված աշխատանքում (Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970) ոչ մի իր չի թվագրված V դարից վաղ, այլ ընդհակառակը մեծ մասամբ՝ VI—VII դդ., իսկ իր վկայակոչած հեղինակները հատուկ չեն գրագրել Դվինի հիմնադրման հարցով, նշել են միայն, որ Դվինը V—VI դդ. մեծ քաղաք էր, կամ որ V դարի երկրորդ կեսին գարձավ մայրաքաղաք։

20 Ա. Ս. Շահնազարյան. Արտաշատ, պատմա-աշխարհագրական տեսություն.— ՀՊՊԻ, «Աշխատություններ», հ. 4, Երևան, 1952, էջ 160—162, 168։ Նույնի՝ Ին գրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղությունը նախկին գարերում. ԱրմՖԱՆ-ի «Տեղեկագիր», 1911, № 2, էջ 7—13։ Ս. Տ. Երեմյան. Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 41, 66, 82, 111—112։ Հ. Եղիազարյան. Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրի շուրջ.—«Էջմիածին», 1956, № 3,4—5, էջ 78—79։

21 Ас. Шахназарян. Двин, историко-географический очерк. Ереван, 1940, с. 7—25.

րով II Կոտակի կառավարման տարիները նշվում են տարբեր ժամանակով, որը տատանվում է 6—8 տարիների միջև[22]։ Այդ ընթացքում տեղի է ունեցել երկու խոշոր իրադարձություն։ 335 թ. մագքութների թագավոր Սանեսանի ղեկավարությամբ հյուսիսային լեռնականները արշավեցին Հայաստան և գրավեցին երկրորդ մայրաքաղաք Վաղարշապատը (ըստ երևույթին նաև Արտաշատը)։ Խոսրով Կոտակը և Վրթանես եպիսկոպոսապետը փակվեցին Կոգովիտի Դարույնք բերդում, իսկ Վտշե Մամիկոնյանը գնաց հունաց կողմերը։ Մաղքութները ասպատակեցին երկիրը, և միայն մեկ տարի հետո հաջողվեց Օշականի մոտ կոտորել ու դուրս քշել նրանց[23]։ Այս դեպքերից հետո է Խոսրով Կոտակը կատարում անտառատնկումը։ Սակայն, մինչ թագավորն զբաղված էր անտառատնկումով, տեղեկություն է հասնում Ադձնիքի «մեծ բդեշխ» Բակուրի և Բզնունիքի Դատաբեն նախարարի ապստամբության մասին։ 336/7 թ. Առեստ ավանի մոտ հաջողվում է ճնշել տպստամբությունը։ 338 թ. Հայաստան են ներխուժում պարսկական զորքերը։ Այս կարճատև և պատերազմական գործողություններով լի ժամանակաշրջանում Խոսրովը ցանկության դեպքում անգամ հնարավորություն չուներ նոր մայրաքաղաք կառուցելու։ Դրա կարիքն էլ չկար, քանի որ Արտաշատը, ինչպես Տրդատ III Մեծի, այնպես էլ նրա հաջորդների օրոք, մնում էր իբրև պաշտոնական մայրաքաղաք և կրոնական կենտրոն, թեև նստավայրը Վաղարշապատն էր, որն այդ ժամանակ ընդարձակվել և կառուցապատվել էր։ Այդ է վկայում նաև Բուզանդի վկայությունը (III, 12) որ «այս լսելով՝ ինքը թագավորն (Տիրանը) անձամբ բոլոր բանակի բազմության հետ նրան (Հուսիկին) ընդառաջ էր գնում դաշտով մինչև Տափերի կամուրջի այն կողմը։ Ապա միմյանց ցանկալի ողջույնը տալով՝ անցնում էին Տափերի կամուրջը, մտնում էին մեծ Արտաշատ քաղաքը, դիմում եկեղեցին, ցանկալի մանուկ Հուսիկին նստեցնում էին հայրապետական աթոռը»։

Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի և Ներսես Ա. կաթողիկոսի ու զորքերի հետ միասին Պապը 369 թ. գարնանը հաղթականորեն մտավ Արտաշատ և հռչակվեց Մեծ Հայքի թագավոր[24]։ Հնագիտական պեղումները հաստատում են, որ դեռևս Խոսրով II Կոտակի ժամանակ Արտաշատը խոշոր քաղաք էր։ Մովսես Խորենացին, ընդհանրապես, երբ խոսում է Արտաշատի, Երվանդաշատի, Վաղարշապատի և մյուս քաղաքների մասին, հատուկ շեշտում է, որ կառուցվեց քաղաք, իսկ Դվինի մասին չի նշում։ Շապուհ II-ի կողմից 368—369 թթ. Հայաստանի ավերված քաղաքների թվում Դվինը չի հիշատակվում։ Նույնիսկ 450 թ. Հագկերտին պատասխան դրելու համար աշխարհիկ և հոգևոր ղեկավարները հավաքվում են Արտաշատում և այլն։ Արտաշատի ավերումից հետո գերեվարությունից խույս տված բնակչության մի մասը, ըստ երևույթին, հաստատվում է Դվինում և այն աստիճանաբար մեծանում է և արդեն 481 թ. հիշատակվում է Մարզպանական Հայաստանի մայրաքաղաք։ Սակայն Դվինի տարիքը կարելի է հաշվել Խոսրով III Կոտակի կառուցած պալատական շենքի ժամանակից՝ 336/7 թ.[25]։

Լայն տարածում գտած և բնորոշ երևույթներից մեկը համալեռնակեցման («սինոյկիսմոսի») եղանակով նորաստեղծ քաղաքները բնակչությամբ ապահովելն էր։ Ըստ Մովսես Խորենացու, վերաբնակեցումը սովորական է եղել նաև Հայաստանի հելլենիստական շրջանի քաղաքների համար։ Որոշակի վկայություններ են պահպանվել Վանի (I, 16, II, 19), Արմավիրի (II, 16,

---

22 330—338, 330—336/7, 332—338 թթ., (ՀԺՊ, հ. 2, Երևան, 1984, էջ 82, 145, 152, 634), 332—338 թթ. (Б. П. Аракелян. Арташат I, Ереван, 1982, с. 15), 330—338 թթ. (ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 78), Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, մասն 1-ին.—Երկեր, հ. 2, Երևան, 1978, էջ 141, 427։

23 ՀԺՊ, հ. 2, էջ 84։

24 Նույն տեղում, էջ 102։

25 Նույն տեղում, էջ 145։

19), Արտաշատի (II, 49), Վաղարշապատի (II, 16) և Արշակավանի (III, 27) վերաբերյալ։ «Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէ, և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ» (I, 16), «և Տիգրան հրաման տայ Բարգաւիրանայ նստուցանել զգերին հրէից որ ի Մարիսայոյ՝ ի քաղաքն Շամիրասայ» (II, 19)։ «Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւնն Հրէից նստուցեալ յԱրմաւիր և յաւանին Վարդէսի, որ ի վերայ Փասաց գետոյ...» (II, 16)։ «Եվ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւիրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ» (II, 49)։

Հայաստանի քաղաքները «սինոյկիսմոսի» միջոցով բնակեցնելու մասին տեղեկություններ են հաղորդում նաև Փավստոս Բուզանդը[26] և անտիկ հեղինակները[27]։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մովսես Խորենացու վկայությունները քաղաքների կոմունալ տնտեսության վերաբերյալ, քաղաքները իմելու և ոռոգելու ջրով ապահովելու, բաղնիքների առկայության մասին։ Նա հիշատակում է, օրինակ, Վանի չքնաղ և գարմանքի արժանի բաղնիքները՝ համապատասխան քաղաքի կիրքին և պետքերին (I, 16)։ Վերը նշեցինք Արտաշատում հայտնաբերված մի քանի բաղնիքների և կոմունալ մյուս կառույցների մասին։ Բաղնիքներ և ջրամատակարարման ցանցեր են բացվել Վաղարշապատում, Դառնի[28] ամրոցում և այլն։ Ուշագրավ են Մովսես Խորենացու հարատարակեալական կառույցներին՝ երկու, երեք հարկանի ապարանքներին, ժայռափոր շինություններին, տաճարներին, շինարարական տեխնիկային, բպարքների հարդարանքին՝ արձաններ կանգնեցնելուն նվիրված և այլ տեղեկությունները, որոնք շատ կարևոր են հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրության համար։ Այդ առումով ուշագրավ է հատկապես Վանին վերաբերող հատվածը. «Նինէ և ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս տէս քարանց և ի դունէից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս և լուսնակագունիւք և ընդարձակ փողոցիւք գլխոյն բազաքին որոշելով։ Նինէ և զչքնաղս ոմանս և զգարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից միջոցայ քաղաքին լուալիս։ Եւ զման ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց և զայլն զեղերք ծովակին յաջմէ և յահեկէ՝ քաղաքին բովանդակ շրջակային յարբուցումն։ «...զայսպիսի կարծութիւն նիւթոյ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս զանձաց և վիհս երկարս, ոչ գիտէ որ, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտացս։ «Եւ ոչ միայն այս, այլ և ի բաղում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ...»[29]։ Երվանդաշատի մասին. «Պարսպէ զրլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բաղում տեղիս կարեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև զիմել ջուրց գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւնս»[30]։ Դառնիի մասին. «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Դառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարու մածուցեալ. յորում շինեալ և ասն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, ի

---

26 Փավստոս Բուզանդ, IV, 12, 55։

27 Strabo, XI, XIV, 6, 15; XII, II, 9; Applan, Mithr., 67, 84; Plut., Lucull, XXVI; Cass. Dio, XXX, 2.

28 Б. Н. Аракелян, Гарни II, Результаты работ Гарнийской археологической экспедиции 1951—1955 гг. Ереван, 1957, с. 23—41; Б. Н. Аракелян. Заметки о водоснабжении и банях городов древней Армении.—Вестник обществ. наук АН АрмССР, 1979, № 10, с. 75—87; Ж. Л. Хачатрян, А. В. Тонкян. Античная баня в Гарни.—Вестник древней истории, 1986, № 3, с. 141—150.

29 Մովսես Խորենացի, I, 16։

30 Նույն տեղում, II, 39։

համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և դրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի դրով»[31]։

Այսպիսով, Հայաստանի անտիկ շրջանի քաղաքների, հատկապես Արտաշատի պեղումները հաստատում են Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի և անտիկ հեղինակների վկայությունները։ Հայաստանի քաղաքները՝ Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը և մյուս քաղաքներն ունեն իդեալական տեղադրություն, որտեղ տեղական ավանդություններից բացի առկա են հելլենիստական քաղաքին բնորոշ բոլոր հատկանիշները։ Անկասկած, Մովսես Խորենացին եղել է Հայաստանի երբեմնի փառաբանված շքեղ քաղաքներում։ Նա ծանոթ է եղել հելլենիստական քաղաքաշինության սկզբունքներին, ըստ երևույթին առաջին հերթին դեպի Ալեքսանդրիա կատարած (≈ 435) իր ուսումնական ճանապարհորդությունների ժամանակ, երբ այցելել է հելլենիստական երկրների մի շարք քաղաքներ և աշխատել այդ քաղաքների գրադարաններում, ծանոթացել հունա-հռոմեական աղբյուրներին, որոնք պարունակում էին մանրամասն տեղեկություններ այդ մասին։ «Հայոց պատմությունը» երկում, որը դրված է հայ և օտար աղբյուրների հիման վրա, Մովսես Խորենացին հաճախ է նշում օգտագործած աղբյուրները կամ ասում, որ «Այս բաներն իսկապես մենք ղտանք հունարեն գրականության մեջ» (I, 5)։ Ալեքսանդրիա գնալիս նա սկզբում այցելել է Եդեսիա, այդտեղից Պաղեստինով Ալեքսանդրիա, հետո Իտալիա՝ Հռոմ, Հելլադա՝ Աթենք, Բյուզանդիոն և Փոքր Ասիայով վերադարձել հայրենիք[32]։ Այսինքն եղել է հելլենիստական շատ քաղաքներում, ծանոթացել հելլենիստական քաղաքաշինության լավագույն տրադիցիաներին, որոնք տեղական ավանդների հետ զուգորդված, իրենց արտահայտությունն էին գտել նաև Հայաստանի քաղաքներում։

ГОРОДА И ГРАДОСТРОИТЕЛЬСТВО АРМЕНИИ АНТИЧНОГО ПЕРИОДА ПО «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

Города и градостроительство Армении представляют большой интерес для разностороннего изучения истории, экономики и культуры Армении и стран эллинистического мира. Поэтому, кроме археологических раскопок и сведений античных источников, заслуживают внимания сообщения раннесредневековых историков Армении, особенно Мовсеса Хоренаци. Мовсес Хоренаци, говоря в «Истории Армении» об эллинистических городах Армении—Ване, Армавире, Ервандашате, Арташате, Вагаршапате, Карине, отмечает важные предварительные условия, которые необходимы для основания города, а именно: город должен был находиться на международных торговых путях, быть окружен плодородными землями для развития сельского хозяйства. Города должны были располагаться на водных артериях (реки, озера), это способствовало рыболовству, охоте и ведению коммунального хозяйства. Города должны были занимать благоприятную для обороны позицию. У Мовсеса Хоренаци мы узнаем, что города основывали по указу царей, населялись они по принципу «синойкизма». Города имели сложную оборонительную систему и единую планировку. Сведения Мовсеса Хоренаци о городах и градостроительстве античного периода Армении совпадают с требованиями, которые упоминают греко-римские источники и которые характерны для городов эллинистического мира. Раскопки древнего Арташата подтверждают сведения Мовсеса Хоренаци. По всей вероятности, он видел эллинистические города Армении, знал о принципах градостроительсва от античных авторов, а также посетил многие города эллинистического мира во время своей поездки в Александрию.

---

31 Նույն տեղում, II, 90։

32 Նույն տեղում, III, 62։